

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 հունվարի 2014 թ.
N 22-Ն

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) N 2 հավելվածի՝

ա. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դեպքում, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարձու աշխատողներին հղիության և ծննդաբերության նպաստը վճարվում է գործատուի անհատական իրավական ակտի հիման վրա՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի աշխատանքային օրերի համար:»,

բ. 4-րդ և 23-րդ կետերում «եկամտահարկը» բառը փոխարինել «եկամտային հարկը» բառերով, իսկ 23-րդ կետում «եկամտահարկի» բառը՝ «եկամտային հարկի» բառերով,

գ. 7-րդ կետի 4-րդ ենթակետում «այլ գործատուի վճարած՝ եկամտի մասին տեղեկանքը» բառերը փոխարինել «մինչև 2013 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար՝ այլ գործատուի հաշվարկած եկամտի մասին տեղեկանքը, իսկ 2013 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված կարգով սահմանված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը (տրված հարկային մարմնի կողմից):»,

դ. 9-րդ կետում «սոցիալական ապահովության քարտի (առկայության դեպքում)» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշի» բառերով,

ե. 15-րդ, 16-րդ կետերում, 24-րդ կետի 2-րդ ենթակետում և 26-րդ կետի 2-րդ ենթակետում «սոցիալական վճարների» բառերը փոխարինել «եկամտային հարկի» բառերով,

զ. 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21. Եթե գործատուն օրենքով սահմանված կարգով ազատված է հարկային գործակալի պարտավորությունից, ապա նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վարձու աշխատողին նշանակում և վճարում է լիազոր մարմինը՝ հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և հարկային մարմնից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշմամբ սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը: Եթե գործատուն «եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով՝ իր հայեցողությամբ հանդես է գալիս որպես հարկային գործակալ, ապա վարձու աշխատողին նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն՝ ընդհանուր հիմունքներով:»,

է. 26-րդ կետի նախաբանում «ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին» բառերը փոխարինել «իր կողմից» բառերով,

ը. 26-րդ կետի 1-ին ենթակետը «անձի» բառից հետո լրացնել «և հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուի վարձու աշխատողի» բառերով, իսկ «սոցիալական քարտի համարը» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշը» բառերով,

թ. 26-րդ կետի 2-րդ ենթակետը «տարվա» բառից հետո լրացնել «(հաշվարկային ժամանակահատվածի)» բառերով.

2) N 3 հավելվածի՝

ա. 1-ին կետում «պարտադիր սոցիալական ապահովության վճարների (այսուհետ՝ սոցիալական վճար)» բառերը փոխարինել «եկամտային հարկի» բառերով, իսկ «սոցիալական վճարների» բառերը՝ «եկամտային հարկի» բառերով,

բ. 2-րդ կետում «սոցիալական վճարները» բառերը փոխարինել «եկամտային հարկի գումարները» բառերով,

գ. 3-րդ կետից հանել «սոցիալական վճարների մասին ամսական հաշվետվության հետ մեկտեղ» բառերը,

դ. 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

- ե. 5-րդ կետից հանել «Սույն կարգի 4-րդ կետում նշված տեղեկանքը 2 օրինակից ներկայացնելու դեպքում՝ տեղեկանքի մեկ օրինակը մնում է հարկային մարմնում:» բառերը,
- զ. 9-րդ կետում «15 օրացուցային օրվա» բառերը փոխարինել «մեկ ամսվա» բառերով,
- է. 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
- 3) N 3 հավելվածի գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին տեղեկանքի ձևում՝
- ա. ձևը «Նպաստը վճարելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

Տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի գումարը (թվերով և տառերով)

- բ. «Սոցիալական ապահովության վճարի հաշվին կատարված ծախսը» բառերը փոխարինել «ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարման ենթակա (վճարված) ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը» բառերով,
- գ. ձևից հանել «Ընդհանուր տեղեկություններ» աղյուսակը,
- դ. ձևից հանել «Տեղեկություններ տվյալ ամսում նպաստ ստացած վարձու աշխատողների մասին» և «Տեղեկություններ տվյալ ամսում ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձանց փոխարինող վարձու աշխատողների մասին (լրացվում է նպաստ ստացած վարձու աշխատողների հերթականությանը համապատասխան)» աղյուսակները և դրանց լրացման կարգերը.
- 4) N 4 հավելվածի ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ձևում՝
- ա. «սոց. քարտի համարը» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշը» բառերով,
- բ. «եկամտահարկի» բառը փոխարինել «եկամտային հարկի» բառերով.
- 5) N 5 հավելվածի՝
- ա. 21-րդ և 24-րդ կետերում «բժշկափորձագիտական» բառը փոխարինել «բժշկասոցիալական փորձաքննական» բառերով,
- բ. 34-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.
«Անաշխատունակության թերթիկով վավերացված՝ հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 180 օրացուցային օրը».
- 6) N 8 հավելվածի՝
- ա. 3-րդ կետում «եկամտահարկը» բառը փոխարինել «եկամտային հարկը» բառերով,
- բ. 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «եկամտահարկի» բառը փոխարինել «եկամտային հարկի» բառերով,
- գ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«8. Գործատուն աշխատավարձից հետ պահված գումարները, որպես եկամտային հարկի գումար, տվյալ ամսվա եկամտային հարկի հետ վճարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արձակուրդն ընդհատվելու ամսվա եկամտային հարկի հաշվետվության հետ միասին հարկային մարմին ներկայացնելով սույն կարգի 4-րդ կետին վերաբերող տեղեկատվություն:».
- 7) N 9 հավելվածի՝
- ա. 5-րդ կետում «պարտադիր սոցիալական ապահովության վճարի» բառերը փոխարինել «եկամտային հարկի» բառերով,
- բ. 6-րդ կետից հանել «և սոցիալական վճարների գծով առաջացած» բառերը,
- գ. 8-րդ կետում «եկամտահարկի» բառը փոխարինել «եկամտային հարկի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
3. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սահմանված ձևի ժամանակավոր անաշխատունակության թերթիկները վավերական են:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

21 հունվարի 2014 թ.
Երևան